# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՄԱՍԻՆ

### ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի հոգևոր և քաղաքական ընկալումներում «թուրք» հասկացողությունը համարժեք է, մեղմ ասած, թշնամի հասկացողությանը, ավելի խիստ ասած՝ ոճրագործ, մարդասպան եզրույթներն են ընկալվում դրան համարժեք: Պատճառների մասին ավելորդ է խոսել, քանզի դրանք պարզից էլ պարզ են և հիմքերը կան նրան այդպիսին համարելու: Բայց շատ ավելի կարևոր է հայության համար ընդհանրական դարձնել այն հայեցակարգը, որ թուրք ժողովրդին ցեղասպան դարձրին ոչ միայն պանթուրքիստական գաղափարախոսական ինչ – ինչ դրույթների որդեգրումներ, այլ՝ Թուրքիան մասնատելու Արևմուտքի և Ռուսաստանի քաղաքական ցանկությունները, որոնց, որպես հակազդեցություն, փորձ արվեց ձևավորելու հիշյալ գաղափարախոսությունը, որի իրականացման գաղափարական և ռազմական բոլոր հիմքերը սպառված էին: Այսպիսի հարցադրումներին Հայաստանում և Սփյուռքում արձագանքները միանգամայն դատապարտելի են դիտարկվում, քանզի տարբեր քաղաքական անձեր, կառույցներ և կուսակցություններ ցանկանում են մեր հոգիներում միշտ վառ պահել թուրքի հավիտենական թշնամի լինելու կերպարը, բնականաբար իրենց տնտեսական և քաղաքական գերխնդիրներով պայմանավորված և, ցավոք, հայրենասեր ընկալվելու մարմաջը լռել է ստիպում այն քիչ թվով մարդկանց, որոնք ավելի ճիշտ են ընկալել այն խորքային գործընթացները, որոնք հանգեցրին հայոց մեծ ողբերգությանը և առավել ճիշտ են ընկալում այն քաղաքական գործընթացների վնասակար հետևանքները, որոնք իրականցվում են այսօր ընդդեմ Թուրքիայի՝ հաճախ մեր կորուստների և ցավի շահարկումներով: Այս ամենի ճշտության մեջ համոզվելու համար անհրաժեշտ է թուրքական գործոնի ճիշտ գնահատումը չշփոթել թրքասիրության հետ, այլ՝ դրա անհրաժեշտությունը բխեցնել այն կորուստների պատճառների ճիշտ գնահատման ցանկությունից ելնելով, որոնք կրել ենք Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնավորումով մինչև 1923թ. և կրում ենք մինչև օրս: Այս ամենը պահանջում է որոնել և գտնել հետևյալ հարցերի ճիշտ պատասխանները.

1. Ի՞նչ էր և է թուրքական գործոնը Ռուսաստանի համար:

2. Ի՞նչ էր և է նույն գործոնն Արևմուտքի համար:
3. Ի՞նչ էր և է հայկական գործոնը Թուրքիայի համար:

Առաջին երկուսի ճիշտ գնահատականի դեպքում մենք ստանում ենք երրորդի պատասխանը: Ռուսաստանը մեր քաղաքական ընկալումներում, ընդհանուր առմամբ, նստած է որպես մշտական բարեկամ և այդ բարեկամի կերպարն այսօր էլ չի խամրել, թեպետ Արևմուտքի քաղաքական շահերին հետամուտ հայաստանյան որոշ ուժեր խիստ բացասաբար են տրամադրված նման դիրքորոշումների նկատմամբ, ինչպես նաև ուժեր, որոնք ազնվորեն ցանկանում են հաշվեկշռի ենթարկել դրան անդամակցելու օգուտներն ու վնասները՝ իսկապես ելնելով մեր պետականության անկախության ամրապնդման շահերից: Դրանց սահմանազատելն այլ խնդիր է: Մենք փորձենք հասկանալ, թե Ռուսաստանի հակաթուրքական կամ Թուրքիան մասնատելու ցանկություններում ինչ դեր էր մեզ հատկացված և արդյոք մենք ճիշտ էինք, երբ չէինք ընդդիմանում, երբ ռուսները մեր թևից բռնած մեզ բարձրացնում էին իրենց քաղաքական լաստի վրա, որը շատ վտանգավոր էր և այդ վտանգն զգացողները որակվում էին որպես թրքամետներ: Հայտնի է, որ ռուսական քաղաքականությունն այս տարածաշրջանում ակտիվացավ 19-րդ դարի սկզբներին, երբ այն փորձեց իր առջև դրված հիմնական խնդիրներից մեկը լուծել, որն էր՝ իջնել դեպի Միջերկրականք: Այս ճանապարհի վրա Անդրկովկասն էր, ապա՝ Արևմտյան Հայաստանը, որոնք գրավելու հիմքերը նա ուներ, քանզի Թուրքիային, որը թույլ պետություն էր տնտեսական և քաղաքական առումներով, ճնշման էր ենթարկում՝ քրիստոնյա եղբայրներին ճնշելու դրդապատճառներով, այդ քաղաքական արտահայտությունների քողի տակ թաքցնելով իր իրական ձգտումները, որը հասկանում էր Թուրքիան: Սակայն, այն ինչ նա հասկանում էր, չէր հասկանում հայ ժողովրդի ղեկավարությունը, որին թվում էր, սկսած Իսրայել Օրուց, որ Ռուսաստանը համակված է հայկական պետություն ստեղծելու անկեղծ ցանկությամբ: Ռուս–թուրքական պատերազմներում հայության օգնությունը ռուսներին պայմանավորված էր այս հավատով, իսկ ռուսների՝ այդ օգնության ակնկալիքը՝ հայությանն ընդդեմ Թուրքիայի տրամադրելով, որը բխում էր նրա քաղաքական ցանկություններից: Հայերի քաղաքական ռոմանտիզմը պարզորոշ դարձավ թե 1806-12թթ., թե 1828 – 29թթ. և թե 1877-78թթ, ռուս – թուրքական պատերազմներից հետո, որոնցում ռուսական ռազմական հաղթանակներին հաջորդում էր դիվանագիտական պարտությունը, քանզի Արևմուտքին ամենևին ձեռնտու չէր Ռուսաստանի կողմից նեղուցների գրավումը և հիմնականում Անգլիան նրա առաջխաղացման դեպքում հանդես էր գալիս Թուրքիայի պաշտպանի դերում:

Արդյունքում՝ Ռուսաստանը կորցնում էր իր հաղթանակի պտուղները, իսկ չեզոքության փոխարեն նրան օգնած արևմտահայությունը Թուրքիայի կողմից ընկալվում էր որպես անվստահելի տարր, ական, որն իր ներսում պահում էր Ռուսաստանը: Վերջինիս հետևից, անկախ փուլային խաբկանքներից, շարունակում էր գնալ արևմտահայությունը, որը տնտեսական և քաղաքական լուրջ կշիռ ուներ Թուրքիայում:

Ուրեմն, թուրքական գործոնը Ռուսաստանի համար նեղուցներին հասնելու դրույթի մի մասն էր, որում ըստ նրա, փոքր–ինչ դերակատարություն կարող էր ունենալ հայությունը, որն այդպես էլ չհասկացավ, որ քաղաքականության մեջ քրիստոնյա լինելը պայման չէ ազգային անվտանգության ակնկալիքի տեսանկյունից: Իր քաղաքական ծրագրերում հայությանն օգտագործելու ռազմավարությամբ, այսպիսով, Ռուսաստանն աստիճանաբար անուղղակիորեն Թուրքիայի համար հասունացնում է այն գաղափարը, որ պետք է ազատվել արևմտահայությունից: Ուրեմն, ցեղասպանության պատճառները գալիս են դեռևս 19-րդ դարի առաջին քառորդից, որը նախ արտահայտվեց հայերի ստիպողական գաղթի ձևով, առաջինը՝ 1830թ.-ին, երբ Էրզրումը Թուրքիային հանձնելուց հետո տեղի բնակչությունից 30000 հայեր Կարապետ եպիսկոպոսի գլխավորությամբ թողեցին իրենց հայրենիքը և բռնեցին դեպի Ախալքալաք և Ծալկայի շրջաններ գաղթի ուղին: Այդ նույն երևույթը շարունակվեց Բեռլինի կոնգրեսից հետո, ապա իր դաժան դրսևորումները ստացավ 1914թ. վերջերից, երբ արևմտահայության բռնագաղթն իրականացվում էր ոչնչացման զուգորդմամբ: Հայկական կուսակցությունների գործունեության ամենաեռուն շրջաններից մեկը 1890- ական թթ. առաջին կեսերն էին, երբ ազգային-ազատագրական դրվագների գլխավոր շարժառիթը մեծ տերությունների, այդ թվում Ռուսաստանի միջամտության ակնկալիքն էր: Նրանց հակասությունը ճիշտ ընկալելով, հակասություն, որը երբեք թույլ չէր տա նրանց միասնաբար ճնշում գործադրելու Թուրքիայի վրա, վերջինս ձեռնամուխ եղավ արևմտահայության առաջին մասսայական ջարդերին: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հայոց առաջին մասսայական ջարդերը տեղի են ունեցել հենց այս շրջանում: Պատճառն այն է, որ ազատագրական ձգտումները կախյալ էին մեծ տերությունների միջամտության թյուր հույսերից: Առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայության նկատմամբ տեղի ունեցածը նույնպես պետք է պայմանավորել չեզոքության փոխարեն ռուսական քաղաքականության հանդեպ հույսերով, երբ հայության շահը պահանջում էր լուռ և անցնցում սպասել պատերազմի ավարտին, որի դեպքում ինքնաբերաբար կճշտվեր նրա կարգավիճակը: Հակաթուրքականության մեր-

ժումը 1908թ. երիթուրքական սահմանադրությունից հետո պետք է շարունակվեր նաև պատերազմի ընթացքում, բայց այն կրկին խախտվեց Բալկանյան պատերազմով, որի ժամանակ մասնավորապես Դաշնակցություն կուսակցությունը խզեց իր հարաբերությունները երիտթուրքերի հետ, կրկին տարվելով Դաշնակիցներով, այն դեպքում, երբ ՀՅԴ - երիտթուրք դաշինքը ամենաճիշտ քայլերից մեկն էր ՀՅԴ պատմության ողջ ընթացքում, և որը չէր ցանկանում Ռուսաստանը: Պատերազմի ժամանակ չեզոքության պահպանումը արևմտահայության անվտանգության հիմնական երաշխիքն էր և ոչ մեկը չի կարող ապացուցել, որ հակառակ դեպքում էլ հայերն այդ չափով կկոտորվեին: Այս մասով ընդհանրացնելով, շեշտենք՝ թուրքական գործոնը Ռուսաստանի համար ի հակադրություն Արևմուտքի, նեղուցներում և Մերձավոր և Միջին Արևելքում ամրապնդվելու ցանկությամբ էր ծնվել, որը ցարերի դարավոր երազանքն էր, իսկ հայկական գործոնը թուրքական գործոնը չեզոքացնելու լրացուցիչ միջոց էր՝ հայության քրիստոնյա լինելու շարժառիթներով հիմնավորված, որի կեղծությունը այսօր էլ մասամբ է ընկալելի: Առաջին Հանրապետության ավարտական փուլում թուրքական գործոնը ռուսների համար փոխեց իր իմաստն ու բովանդակությունը: Այս անգամ նա նեղուցներից դաշնակիցներին քշելու ցանկությամբ համակված, նպաստեց նոր Թուրքիայի ստեղծմանը, այս առումով հասնելով իր նպատակին, իսկ հայ քաղաքական առաջնորդերն էլ, չհասկանալով այդ՝ կառչած մնացին Սևրի պայմանագրին, որն իր կնքման պահից իսկ ձախողման դատապարտված փաստաթուղթ էր, փոխանակ գնալու թուրքերի հետ բանակցությունների, որոնք դրա կարիքն ունեին 1920թ. հունիս – հուլիսին: Սրա ճշտությունը խոստովանել են Հայաստանի առաջին Հանրապետության շատ գործիչներ՝ նրա անկումից շատ չանցած: Արևմուտքի համար նույնպես թուրքական գործոնը հանդիսացել է Թուրքիայի վրա ռուսական ազդեցության չեզոքացման գործոն: Եթե նրան ձեռտու չի եղել ռուսական առաջխաղացումը, ապա՝ նա փրկել է Թուրքիային, կասեցնելով այդ առաջխաղացումը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անգլիան և Արևմուտքը ավելի անկեղծ են եղել Հայկական հարցի լուծման ցանկություններում, բայց Արևմտյան Հայաստանն ու նեղուցները նրանք խոստացել էին Ռուսաստանին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի պատերազմից դուրս մնալով, նրանք ցանկացել են անկեղծորեն կայացած տեսնել ՀՀ անկախությունը: Սակայն հայ քաղաքական ղեկավարները չափավոր չեն եղել իրենց քաղաքական և տարածքային պահանջների մեջ, որը նպաստել է քչի փոխարեն կորցնել առավելագույնը: Քեմալական շարժման ձևավորմամբ նրանք ցանկացել են մերձենալ Քե-

մալին, քանզի անկարող էին նոր պատերազմ սկսել Ռուսաստանի և Թուրքիայի դեմ, դարձյալ այն պատճառով, որ Ռուսաստանի փոխարեն նեղուցների վրա տեսնեն Թուրքիային: Այս իրավիճակում նրանք հայերին մատնանշել են թուրքերի հետ լեզու գտնելու ուղին, որը հայերը հասկացել են ուշացումով, երբ շուտ հասկանալով կարող էին խուսափել 1920թ. հայ - թուրքական պատերազմից: Փաստորեն.

1. Ռուսաստան - Արևմուտք հակասությունները պատճառ են հանդիսացել Թուրքիայի հաղթանակի կամ վերածնվելու համար:

2. Հայ քաղաքական ուժերը այդպես էլ չեն հասկացել, որ իրենց օգտագործել են՝ արդյունքում փոքր ժողովուրդներից հանդիսանալով ամենից շատ զոհեր տվողը: Դա խորհել է տալիս, որ ունեցել են մարտավարական և ռազմավարական լուրջ սխալներ: Այս պայմաններում հայկական գործոնը թուրքերն ընկալել են մեծ տերությունների կողմից Թուրքիան մասնատելու գործոն, ինչին որպես մասնակից են ընկալել նաև հայերին:

3. Այսօր էլ նրանք շարունակում են առաջնորդվել արտաքին քաղաքականության մեջ հակաթուրքական գիծ որդեգրելու ցանկություններով, որը գործնականում մեզ ոչինչ չի տալու և միայն արդյունքում թշնամանքը խորացնելով կարող է հանգեցնել նոր աղետալի հետևանքների՝ մեզ թողնելով միայն աղերսողի կարգավիճակում, որից ամենևին չեն մտահոգվի ո՛չ Արևմուտքը, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ որևէ մեկ այլ հզոր տերություն: Այս ամենի գիտակցումն այսօր վեր է ամեն ինչից: